առ Հերակլ, եւ տեսեալ զմիմեանս ուրախ եղեն յոյժ։ Ապա 'ի լինել բանից՝ երդմամբ խոստանայ Հերակլ տալ նմա զթագաւորութիւնն Պարսից՝ եւ յետ նորա որդւոյ նորին, և դումարել զօր բազում որքան և կամեսցի, միայն զի դարձուսցէ ինքեան զՓայտ խաչին Քրիստոսի, զոր գերեաց յԵրուսաղէմէ։ և երդուաւ նմա Խոռեմ եւ ասէ։ յորժամ հասից 'ի դուռն Պարսից, խնդիր արարեալ գտից և առաքեցից առ քեզ, և մեկնեցան 'ի միմեանց։ Հասեալ Խոռեմայ 'ի Տիզբոն՝ սպան զմանուկն Արտաշիր, եւ ինքն անցեալ նստաւ յաթոռ թագաւորութեան Պարսից։ կոտորեաց զամենայն այր կասկածաւոր և զայլս առաքեաց կապանօք առ Հերակլ։

Իսկ Կայսրն յաւել արձակել առ Խոռեմ զարս հաւատարիմս վասն կենսաբեր Խաչին, և նորա խնդիր արարեալ ըստ խոստմանն եգիտ զայն 'ի տան գանձուն, և ետ ցարսն եւ արձակեաց զնոսա ուրախութեամբ։ Եւ նորա ընկալեալ զնա 'ի ձեռաց հաւատարմացն՝ լցաւ անպատմելի ուրախութեամբ և չոչ արարեալ բազմութեամբ զօրաց իւրոց տարեալ հասոյց զայն 'ի Ս։ Քաղաքն Երուսաղէմ հանդերձ սպասուք Եկեղեցւոյն, որք զերծեալ էին 'ի ձեռաց թշնամեաց 'ի Բիւզանդիոն։ և կանգնեաց ինքնին զՍ։ Խաչն 'ի տեղի իւր 'ի Գողգոթա եւ եղեւ ուրախութիւն և ցնծութիւն հաւատացելոց, և պատուեալ զեկեղեցիս և զաղքատս տրօք և ողորմութեամբ դարձաւ 'ի Միջագետս Ասորւոց, (629)։

Եւ յաղագս դարձի Խաչին յԵրուսաղէմ։ Տես 'ի ծանօթութիւնս։ Հ։ Մ։ Վ։ Զարմէն։ Պատմ։ Հայոց։ Հատ։ Բ։ Եր։ 531։